



## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան և իրավասու կազմակերպություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ ներառյալ հարկերը, պողպատե խողովակների, հեղյուսի և մանեկի, կցամասերի և կարբիդի մատակարարման՝ մեկ կամ մի քանի ստորն բերված լոտերի համար՝

լոտ 1–պողպատե խողովակներ՝ 21.3-273մ տրամագծերով, անկյուններ՝ 21.3-273մ տրամագծերով,

լոտ 2 – հեղյուս, մանեկ՝ 6-13 մ տրամագծերով, հեղյուս, մանեկ՝ 14-24 մ տրամագծերով,

լոտ 3 – միակողմանի պարուրակով դետալներ՝ 15-75մ տրամագծերով, երկկողմանի պարուրակով դետալներ՝ 15-75մ տրամագծերով, անցումներ (մուֆտ)՝ 15-75մ տրամագծերով, եռաբաշխիչներ՝ 15-75մ տրամագծերով,

լոտ 4 - կարբիդ:

### Տեխնիկական և առևտրային պահանջներ՝

1. Մատակարարումը պետք է իրականացվի պատվերների հիման վրա:
2. Գնային առաջարկը պետք է ներառի տեղեկություն առաքման պայմանների վերաբերյալ:
3. Ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր մեկ տարի տևողությամբ հետագայում շարունակելու հնարավորությամբ:
4. Պետք է ներկայացնել որակի և համապատասխանության սերտեֆիկատներ:
5. Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.
  - 1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
  - 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
  - 3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
  - 4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Որպես պայմանագրի ստորագրման նախապայման պայմանագիր շնորհված ընկերությունը պետք է ներկայացնի հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ:

Հետաքրքրվող հայտատուները պետք է գնային առաջարկի ներկայացման ձևի վերաբերյալ տեղեկություններ ստանալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից աշխատանքային օրերին ժամը 09.00-13.00 և 14.00-18.00՝ ստորն նշված հասցեում՝

ՀՀ, ք. Ադոնցի 6, 0014, Վեոլիա Ջուր ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն:

Հեռ.՝ (374 11) 30-01-86 (440),

Էլ-փոստ՝ [procurement@vjur.am](mailto:procurement@vjur.am) :

Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով վերը նշված էլ.փոստին, ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 16-ը, ժամը 15:00 վերը նշված հասցեով:

Ուշացած գնային առաջարկները կմերժվեն:

## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված հրավերը Ընկերության անվանումը պատրաստ է պայմանագիրն իրականացնել հետևյալ միավոր գնով:

		Առաջարկվող միավոր գին*
1	բենզին ռեզուլյար	
2	բենզին պրեմիում	
3	դիզելային վառելիք	

*\*Ծանոթություն: Առաջարկվող միավոր գինը պետք է սահմանված լինի տվյալ պատվերի պահին շուկայական մանրածախ գների հետ համապատասխան տոկոսային կամ դրամական հստակ զեղչով:*

Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավորված չեք ընդունել մեր առաջարկը կամ ցանկացած առաջարկ, որը ստանում եք:

Ստորագրություն՝ \_\_\_\_\_

Ստորագրողի անունն ու պաշտոնը \_\_\_\_\_

Մատակարարի անունը՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

Հեռախոսահամարը \_\_\_\_\_

Էլ.փոստի հասցե \_\_\_\_\_